Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-L որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020 թվականի ---------- N - L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի N 184-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 7-ի «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» N 184-L որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

- Ուժը կորցրած ճանաչել «Ծրագրի նկարագիրը» բաժնի 14-րդ կետը,
- «Ծրագրի նկարագիրը» բաժնի 15-րդ կետի 3-րդ ենթակետում «գյուղատնտեսության նախարարությունը» բառերը փոխարինել «էկոնոմիկայի նախարարությունը» բառերով,
- «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարկի տրամադրումից հետո Ֆինանսական կառույցի կողմից վեցամսյա ժամկետում իրականացվում է նպատակային մոնիթորինգ և Ֆինանսական կառույցի ներքին իրավական ակտերին համապատասխան՝ ֆինանսական մոնիթորինգ։»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող

օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ